Տիկին

Ամբիւրի յատկուած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 2 կիրակի 11 յունուարի | իններորդ տարի 1898

ՍԵՒ — ՔԱՂԱՔ

(Վէպ Բագւի գործարանական կեանքից)

—

ՄԱՍՆ ԱՒԱԶԻՆ

Առաքել-վարժապետ

Ե
Վ Ա Գ Ո Ն Ի Մ Է Ջ

—

Եստեղազարդ մայիսեան գիշեր էր. Ազստաֆայլի (Ազստեւ) կայարանում ժամը տասնու մէկին հաւաքուած էր ճանապարհորդների մեծ բազմութիւն: Երկաթուղու վրայ հեռւից նկատւում էր գնացքը, որը մեծ դղրդիւնով, շւոցով Թիֆլիսից գալիս էր Բագու գնալու: Բազմութեան մէջ կանգնած էին երկու երիտասարդներ և հետաքրքիր հայեացքով դիտում ուղևոր, բէլետները, վագզալի շինութիւնը, կերօսինի կաթսա-վագոնները, մի խօսքով ինչ որ նրանք չէին տեսել, բայց ինչպէս երևում էր, գաղափար կազմած էին դրանց մասին իրանց տեսած նկարներից, պատկերներից և կարդացած գրքերից:

— Առաքել, եկաւ, Առաքել, հասաւ, ահա մօտեցաւ, ասաց երիտասարդներից մէկը իր ընկերոջը և աւելացրեց—Ո՞հ այս ինչ անզգամի ձայն է, խլացայ:

—Յայտնի բան է այդպէս էլ Հարկաւոր է: Եղիշ, սէյր անելու ժամանակը չէ, շտապիր, գնանք տոմսակ առնենք և տեղ բռնենք:

—Դու էլ բան չունիս, վախենում ես տեղ չըգտնե՞նք: Տես որքան վագոններ կան, քսան, երեսունից էլ աւելի են երևում:

—Չէ այդքան չի լինիլ: Ինչ էլ որ լինի, ետ ընկնելը լաւ չէ, Եղիշ, գնանք:

—Դու միշտ այդպէս ես, չես թողնում մարդու, որ շուրջը քննէ: Տե՛ս, տե՛ս ինչ գեղեցիկ օրիորդ իջաւ վագոնից, կարծես հրեշտակ լինի, մի լաւ դիտէ, Առաքել: Բայց ափսո՛ս, քովի ակնոցաւոր շէկ մէրուքը տգեղացնում է նրան:

— Ա՛յ, տղայ, դորդ լաւն է: Բայց տես ինչպէ՛ս քծնում է այդ ֆանֆարոնը. քիչ է մնում, որ չոքի և ոտքերն համբուրէ:

—Նայի՛ր, նայի՛ր, Առաքել, այս եզոպոս գերուկին, նրանց է հետևում: Երևի բուֆէտն են գնում:

—Յայտի բան է, էլ ո՛ւր են գնալու:

—Առաքե՛լ, գնանք մենք էլ մի մի բաժակ թէյ խմենք և դրանց քիչ էլ դիտենք: Լաւ է, օրիորդները վեր կառնենք, պէտք կըգայ:

—Գնա՛, գնա՛, մ՛թէ կարելի է տասը կոպէկով մի բաժակ թէյ խմել: Չինգ կոպէկի մի պար չայը երկուսիս էլ բաւականութիւն կըտայ: Այդ ախորժակդ պահի՛ր, երբ լաւ գործ ունենանք, այն ժամանակ... Բայց ուշացանք, գնա՛նք տեղ բռնենք:

Երկաթուղու սուլիչը շւացնում էր, երկրորդ զանգը արդէն խփել էին, երբ երկու երիտասարդները կապոցները ձեռքերին դիմեցին այն վագոնը, որտեղ մտաւ գեղեցիկ օրիորդը ակնոցաւոր պարոնի հետ: Այդ այն վագոնն էր, որի կէսը երկրորդ և միւս կէսը երրորդ կարգի էր:

Մեր կարծածի պէս չեղաւ, Առաքել, նրանց տեղը բաժանւած է մեզանից: Ես հոգով ցանկանում եմ մի քիչ նրանց լսել և ծանօթանալ դրանց կեանքի հետ:

—Բան չունիս, Եղի՛շ, դու տեղ գտի՛ր, նստենք: Քու խօսքիդ հետևեցի, ուշացանք, այս կողմն եկանք և ահա ոտքի վրայ ենք մնալու:

—Վա՛յ քեզ, Հայ վարժապե՛տ, վագոնի մէջն էլ քեզ մարդու տեղ դնող և երեսիդ նայող չըկայ, ասաց կատակելով Եղիշը:

—Ի՞նչ ես յիմար յիմար դուրս տալիս, տեղ գտի՛ր, նստի՛ր, տոմսակը ձեռքումդ է, ո՛վ կարող է քեզ խանդարել:

—Ահա՛ տեղ շատ կայ, բայց ի՞նչ անեմ. մի մարդ պառկել է, տարածւել և չորս մարդու տեղ է բռնել, կարծես թուրքի փաշա լինի: Զարթեցնես գուցէ զայրանայ, ձայն չըհանես, դու ես ոտքի վրայ մնալու:

—Այստեղ էլ երեք կանայք են տարածւել, տեղերը բռնել, անքաղաքավարութիւն է սրանց վրդովելը:

—Միշտ այդպէս է լինում, Առաքել ջա՛ն, մենք ուր որ գիմում ենք, միշտ բռնւած է լինում:

—Է՛հ, էլի սկսեցիր սրախօսութիւններդ: Ի՞նչ է, չի կարելի մէկ-երկու ժամ ոտքի վրայ համբերել մինչև այս կանայքն արթնանան կամ ճանապարհի կայարաններում իջնեն:

—Ինչի՞ չէ, մինչև բազու էլ կարելի է սպասել: Բայց եթէ դրանք դուրս գալուց յետոյ տեղերը նորերը գան և առանց մտածելու, որ մենք յոգնած ենք, պառկեն սրանց նման, ամեն մինը երեք չորս մարդու տեղ բռնելով...

—Քեզ հետ վիճելու չէ, դու վէճը կատակի, կատակն էլ ծայրայեղութեան ես հասցնում: Ես կըտեղաւորւեմ հանդարտօրէն այս մարդու ոտքի տակ, դու էլ այն մարդուն մի քիչ անհանգստացրու, թող ոտքերը քիչ ծալէ, դու էլ նստի՛ր:

Պառկողները քնած չէին, այլ լսում էին այս խօ-

սակցութիւնը, բայց իրանց Հանգստութիւնը չէին ուզում խանգարել և տեղ տալ եկողներին: Առաքելը նստեց մի կերպ, իսկ Եղիշը մօտենալով երկրորդ կարգի բաժանմունքի դրանը, բաց արեց և ազատ տեղ նկատելով գնաց ու պառկեց: Օսլայած շապիկ, ներկած կօշիկներ, կոկիկ շորեր, շլեասպա, ժամացոյց և ձեռնափայտ՝ անհրաժեշտ կարիք են հայ վարժապետի համար, որոնք միշտ ստիպում են թէ ծառայող դասակարգին և թէ հասարակութեան յարգանքով վերաբերուել նրանց: Եղիշը թէև գրպանում փող չ'ունէր, բայց վրան գլուխը կարգին էր: Նրան քնած նկատելով, վագոնի կոնդուկտորները քննութեան ժամանակ նեղութիւն չըտուին, վստահ լինելով որ այդ ֆրանտիկ երիտասարդը չէր կարող ապօրինի վարել:

Եղիշը քնած չէր, միայն երկար յոգնածութիւնից յետոյ հանգստանում էր: Նրանք հինգ օրում Ալէքսանդրապոլից Ազտև հազիւ էին հասել ֆուրգոնով և ճանապարհի մեծ մասը ոտքով էին անցել: Եղիշի այդտեղ մտնելու գլխաւոր նպատակը ռակէ-քաղաքացիների հետ ծանօթանալն էր:

—Օրիորդ, ասաց շէկ երիտասարդը գեղանի աղջկանը ռուսերէն լեզուով, երբ արդէն Եղիշը կատարեալ մրափողի դեր էր կատարում, օրիորդ, չեմ կարողանում լեզուս թոթովել... Ա՛խ, եթէ գիտենայիք որքան խիստ գրաւեցիք սիրտս, Հոգիս, երբ առաջին անգամ պատահեցինք Միքայէլեանցների տանը: Անկեղծ եմ ասում, հաւատացէք, այն օրից իմ սրտումս մի այնպիսի կայծ ընկաւ, որ ես չեմ իմանում, թէ այդ կայծը ինձ պիտի այրէ և լափէ, թէ կենդանութիւն պիտի տայ, որ արծւի նման սլանամ... Ալիսիա Եակովլևնա (Արուսեակ Յակոբեան), ձեզանից է կախած, դուք, միայն դուք էք վճռելու այս Հարցը. ձեր մի բառից է կախած իմ լինելն ու չլինելը:

—Գերասիմ Պաւլովիչ, քեզ ասացի որ էդ մասին խօսք էլ չըբանաս, էդ բանը խորունկ թաղես սրտիդ մէջ և համբերես: Նախ որ ես դեռ երկու տարի էլ շարունակելու եմ կուրսս, մինչև չ'աւարտեմ, ոչ ոքի խօսք չեմ տալու, դա իմ ներքին վճիռս է: Մանաւանդ որ այդքան երկար միջոցում դու էլ միջոց չ'ունենաս լրջութեամբ այդ ծանր հարցը քննելու, ես էլ: Մինչև իրար լաւ չըճանաչենք, չենք կարող ապագայում երջանիկ ու բախտաւոր լինել: Թէ անկեղծ են խօսքերդ, թէ սրտիդդ է ըղխած էդ բոլորը, ես կասկած չ'ունիմ, բայց տաք, տաք շտապ շտապ կատարելու գործ չէ մեր ցմահ կապը: Երկու ամբողջ տարիներ մենք կրմնանք լոկ բարեկամներ, իսկ նրանից յետոյ, եթէ երկուսս էլ համոզմունք կազմենք, կարող ենք իրար ձեռք երկնցնել, ասաց դողդոջուն կերպով Արուսեակը, շիկնելով ու կարմրելով, չըկարողանալով բորբոքումը զսպել:

—Օրիորդ, ջղերը, կրքերը, սիրտը դատողութիւն չեն ըմբռնում, չեն հնազանդում մտքի: Ուրեմն դուք ոչինչ չէք զգում, դուք անտարբեր էք դէպի իմ տանջանքները, ասաց բորբոքելով և հառաչելով Գերասիմ Պաւլովիչը: Երկու ամբողջ տարի՜ներ, այդ սոսկալի, տաժանելի դատապարտութիւն է. գոնէ դուք խոստացէք, որ սիրտս Հանգարտւի, կըտանեմ քո դրած ապաշխարանքը: Մի բառ, մի խօսք, օրիորդ, հնչեցէք, արտասանեցէք և ես պատրաստ եմ ամեն զոհողութիւն անելու: Մի այդպէս սառնասիրտ վարուիք, մի կնճռոտէք ձեր դէմքը, դիտողը կարող է կարծել, որ ձեր կրծքի տակ սիրտ չըկայ...

—Ո՛չ, Գերասիմ Պաւլովիչ, ո՛չ, ինձանից վճռական խօսքի մի սպասէք, ասաց Արուսեակը, որ արդէն կարողացել էր զսպել ինքն իրան և սառնասրտութիւն արտայայտել: Բայց լաւ գիտցէք, որ որքան ձեզ խօսք եմ տւել, կեանքումս ոչ ոքի չեմ զիջել և ոչ էլ մինչև այս պայմանաժամի լրանալը խոստանալու եմ: Ձեզ ասում եմ՝ համբերեցէք. եթէ մինչև իմ պայմանաժամի լրանալը Հաստատ կըմնաք ձեր խօսքերին, էն ժամանակ էլ ես պատճառ չեմ կարող գտնել ձեր առաջարկութիւնը մերժելու: Ինձ մի վրդովէք, այդպիսի կրկին ու կրկին թախանձանքներովդ կասկածները մի զարթեցնէք իմ հոգու մէջ: Արիացէք, ես էդպէս թախանձողներին համբերել չեմ կարող: Վճիռս ես փոխողը չեմ, երկու տարի ինձնից խօսք չէք կարող ստանալ, ինչ էլ որ խօսէք զուր է և պիտի ձեր դիրքը ստորացնէք իմ առաջ և այդ բանը հաւատացած եղէք, որ ինձ հաճելի չէ երբէք:

—Ա՛խ, օրիորդ, եթէ զգայիք, եթէ թափանձէիք Հոգուս խորքերը...

—Աւելի լաւ, հաստատամտութեամբ էլ պինդ շղթայով կարող էք կապել սիրտս և Հոգիս...

—Բայց ժամանակամիջոցը...

—Կասկածներ մի՛ ունենաք, իմ մասին այդպիսի թիւր գաղափար մի տածէք, դրանցով դուք կըվշտացնէք Հոգիս: Իս օր ուղիղ է, դուք գալիս էք կառավարելու իմ Հօրս գործարանը, մի ռոճիկով մարդ էք և գուցէ կասկածում էք, որ ես երբ ևէ շլանամ մի ուրիշի արտաքին փայլով և ճոխութիւնով, բայց դուք լաւ Համոզուած եղէք, որ ես սին փառքերով շլացողը, հրճւողը չեմ: Մարդու սիրտը,

աղնւութիւնը, խելքը և ոչ թէ ճոխութիւնն է պէտք։ Մենք բազուցի ենք, արտաքին վայելից, ոսկու ղեղերից չենք խաբւիլ. իմ հայրս Բագու է մտել տրեխով, մշակութեամբ է հասել էսօրւայ դրութեանը։ Ամեն ճարպիկ մարդ, եթէ կարողանայ իր կրքերը զսպել, կարող է Բագւի մէջ էդ ճոխութեան հասնել, բայց ամենի կրծքում ազնիւ, քնքոյշ սիրտ չի կարելի գտնել։ Մի կարծէք, որ Թրթռան մի աղջիկ է կանգնած ձեր դէմ. այդ բանը կարող է ծակել իմ սիրտս, մի կարծէք որ այնքան թեթեւ լինիմ, որ քամին կարողանայ ինձ դէպի ամպերը բարձրացնել... Ո՛չ, ոչ... Եթէ ազնիւ էք բնութեամբ, բարքով և հոգւով, ինչպէս ծադումով, էն ժամանակ կասկած մի ունենաք իմ սրտի մասին, նա ձերը կըլինի։ Բայց իրար չըճանաչած, նելեցէք, որ չեմ կարող ձեզ խօսք տալ։ Սպասեցէք, ես էլ եմ սպասելու ձեզ հետ. ինչ էք իմանում, որ ես էլ չեմ տանջւելու ձեզ հետ...

—Կըսպասեմ, օրիորդ, պիտի սպասեմ և եթէ կուրծքս կրծէ, մաշէ ու թափէ այս տանջանքը, լաւ դիտցէք, որ ուրախութեամբ եմ մօտենալու սև հողին, համոզած լինելով, որ ազնիւ սրտի համար արժէ զոհւել։

—Յոյս ունիմ, բարիին ու ազնււին միշտ սիրահար մնալու։

—Ապագան թող վճռէ, ասաց Թուլացած Ֆերդասիմ Պաւլովիչը։

—Վստահ եմ, որ երբէք ձեր առաջ ամօթապարտ չեմ մնալու։

—Ես էլ, օրիորդ, վստահ եմ, որ մինչև մահս պիտի կարողանամ միևնոյն բառը մրմնջել ձեզ և ձեր բարեբախտութիւնը միայն կարող է խաղաղացնել ու անդորրացնել հոգիս։

—Սպասենք...

Լռեցին երկուսն էլ։ Եղիշը կեանքումը առաջին անգամն էր լսում մի օրիորդի շրթունքներից այսպիսի խօսքեր։ Այս խօսակցութիւնը նրան խորասուզեց քաղցր երազների մէջ և նա սկսեց համեմատութիւններ անել իր տեսած կանանց ու օրիորդների և Արուսեակի մէջ։ Գաւառներում Եղիշը շատ հայ կիներ, օրիորդներ, վարժուհիներ, զարգացածներ ու տգէտներ, դերասանուհիներ և դերձակուհիներ տեսել էր, բայց մի այսպիսի խօսակցութեան իր ականջին չէր բաղխւել, իրան այսքան մօտ տեղ չէր ունեցել։ Եղիշը խորասուզւած մտածում էր և ապշում օրիորդի ազատախօսութեան վրայ, որ պարզ կերպով, առանց քաշւելու հաղորդում էր իր ձեռքն ուզողին։ Եղիշը պատրաստ էր իր կեանքն էլ զոհելու մի այդպիսի ընկերուհու համար, եթէ կարողանար պատահել։ Այս մտածութիւններով զբաղւած ժամանակը երկաթուղին մօտեցել էր կայարանին և ամենքն սկսեցին ցած գալ։

Եղիշը դուրս եկաւ և Առաքելին գտաւ։ Այնպէս խելագարի ձևերով և շարժումներով նրան մօտեցաւ և այնպէս ոգևորւած, որ Առաքելը չըկարողանալով ծիծաղը զսպել, ասաց.

—Էլի ինչի՞ ես չիմարացել, ինչի ես այդպէս ոգևորւել։

—Մեռայ, Առաքել, հալւեցայ։ Ա՛յ տղայ, գըժւեցայ, խելառւեցայ...

—Հը ինչ է, ինչ կայ, ասաց Հանդարտութիւն կեղծելով Առաքելը։

—Հրեշտակ, կատարեալ անտիական օրիորդ։ Մտքիր, գաղափարներ, ինչ ասեմ, որ մէկը պատմեմ, որ մէկը նկարագրեմ... Կարելի է չափշտակւել դրա վրայ, դա մեր սովորական աղջիկներից չէ, մի բըլբուլ, մի ճարտասան, մի տրամաբան.

—Էլի չափշտակւել է մեր խելագարը.

—Այո՛, այո՛, անկեղծ մարդը կըխելագարւի և զգացածը կարտայայտէ...

—Լա՛ւ, լաւ դէ պատմիր, պատմիր տեսնենք, ինչն է քեզ ապշեցրել։

Եղիշը Առաքելին մի առ մի պատմեց բոլոր սածներն ու տեսածները։ Առաքելն ուշի ուշով հետևելով նրան, երբ վերջացրեց, ասաց.

—Այո՛, պիտի գայ ժամանակ, երբ դաստիարակութիւնը և զարգացումը պիտի այդ բարձրութեան վրայ կանգնեցնէ բոլոր կանանց։ Աշխատենք լաւ մայրեր ունենալ և այդ իդէալական կեանքին կըհասնենք, եթէ ոչ մենք, գոնէ մեր զաւակները։

Մինչև Եւլախ կայարանը քնած էին ինչպէս երկու ընկերակիցները, նոյնպէս և Արուսեակը, Ֆերդասիմ Պաւլովիչը և հաստափոր վաճառականը։ Եւլախից նոր ճանապարհորդներ մտան վագոն և երկու հոգի էլ նստան մեր վարժապետների դէմ ու դէմ։

—Առաքել, սրանք հայեր չե՞ն, հարցրեց Եղիշը։

—Հայեր հն երևում, զարթաղցի կըլինին։ Բայց շորերը, գդակները, ձևերն ու շարժումները բոլորովին նահապետական են։

—Թշւառները տեսնես ուր են գնում, ընտանիք, տուն, տեղ թողած.

—Դու ո՞ւր ես գնում, մի՞թէ ընտանիքիդ մօտ։

—Գոնէ ամուսնացած չենք, ընտանիք, մանր ու խոշոր չունենք։

—Քեզ համար, Եղիշ, ոչինչ, Հայրդ ժիր է, կարող է պահել ընտանիքը, եօլա կեր-

Միջին դարի վայրագութիւններից.

թան, իսկ ես ինչ անեմ, տանը մի ամսուայ ապրուստ չ'ունենք: Հայրս ծեր է, ընկած անդործ, մայրս նրա նման, իսկ քոյրս տանը...

—Փա՛ռք Աստծոյ, կ'ապրեն: Վախենում ես չըկարողանաս մի այնպիսի գործ ճարել, որ ամսականս տասը, կամ քսան րուբլի ուղարկես ապրելու...

—Չորս-հինգ հոգի և տասը րուբլի: Կ'ապրեն, բայց վա՛յ այն ապրուստին:

—Առաքել, էլի տունդ միտդ ընկաւ:

—Է՛հ, հայոց ուսուցչի վիճակն այսպէս է, առաջ քաղաքից քաղաք էինք թափառում պաշտօնի համար, հիմի այդ էլ կորաւ: Այժմ ինչուում գործ պիտի ճարենք ու ապրենք, թողնենք, յափտեան մնաս բարով ասենք մեր երազած ու երևակայած սուրբ պաշտօնին:

—Ոչինչ, մի՛թէ մեր ծնելիս մեր ճակատին վարժապետ անունն են դրոշմել, քիչ էլ գործաւոր դառնանք:

—Մոռանանք խոպան վարժապետութիւնը, քանի որ նա էլ հաց չէ տալու: Եղի՛շ, այս էր ուսումնարանի տախտակների վրայ մեր ուխտածնեբը... էլ մանուկների հետ գործ չենք ունենալու: Ի՞նչ է մեզ սպասում:

— Մխիթարեան է, գնանք, կ'անենք ինչ որ պատահեայ: Ագնուիթեամբ ու մեր աշխատութեամբ կըճարենք մի կտոր հաց, դրանից լաւը չըկայ.

—Ապրե՛նք մի կտոր հացի համար.

—Առաքել, քիչ խօսիր, գործիդ նայիր, մի՛թէ ազնուութիւն, ճշմարտասիրութիւն չէ կարելի քարոզել և այն շրջանում, որտեղ մենք բանելու ենք: Թո՛ղ չըլինեն փոքրեր, լինեն հասակաւոր երեխաներ:

—Մեծ տարբերութիւն կայ, ասաց Հառաչելով Առաքելը և քիչ լռելուց յետոյ դարձաւ ղարաբաղցիների կողմը և հարցրեց.

—Եղբա՛յր, դուք որտեղա՞ցի էք:

—Հ՛ըմ, ասաց ղարաբաղցիներից աւագը, հարցմունքը չ'ըմբռնելով:

—Ո՞րտեղացի էք:

—Ղարաբաղցի.

—Ձուշի քաղաքի՞ցն էք:

—Չէ, մենք Մամնայ շէնացի ընք:

—Ո՞ւր էք գնում.

—Բագու, բանանելու:

—Չէնում չէ՞ք կարող աշխատել, որ գնում էք Բագու:

—Գործը ըստեղանա շէնըմը: Խարչեր օնինք բագին տալացու՞ք:

—Ձեր գիւղի հողը արքունակա՞ն է:

—Հօր չէր, որ թըքաւրական ընէը, մունք էլ դինչ ընէինք: Մեր շէնը բագլըղ ա:

—Ամբողջ Ղարաբաղի գիւղերը բէգերի՞ննն է.

—Չէ, բագի էլ կայ, թըքաւրական էլ:

—Տարեկան ինչ էք տալիս բէգերին:

—Հու ա գիդըմ. ըլածին կէսը տանըմ ըն: Ըլած վախտն էլ ձեռքներն ընկած հէյւանըն տանըմ: Կոռ ու բէգեարի տակն ընք ընկնում, պարտքը կալիս ա մէջքիտ հոռը կոտրում. բա հո՞ւնց անենք, որ քինանք վէչ ինաքու փող աշխատելու:

—Էլ Բագու գնացի՞լ էք:

—Ես երկու դօնըմ քընացալըմ, հընկերըս սովթա քընալըն ա:

— Փող բերել ես:

— Է՛հ, անիծած ընի պերած փողը: Պարտքը փիս պէն ա, մեր սովդաքարին աչքըն էլ չէ քըշտանըմ. մին մարթի վեր չիթգուն մանէթ տան, հինգ տարի մին գըլօխ տարին հարիւր մանէթ էլ տաս, էլլա պարտքիցըտ պռծում չինիլ:

—Լսում ես, Եղի՛շ, ճիշտ մխիթարեան աղաները: Երևան, Ալէքսանդրապոլ, Ղարս, Ախալցխա ինչ դարդեր, ինչ ցեցեր որ կան, մխիթարեանը ամեն կողմ սփռուած են: Վաշխառուն կրծում է, կրկտնում, պարպում ժողովրդի սիրտը: Մի անգամ թաղարդներում ընկած են, ցմահ, ստրուկ են դարձնում:

—Ձեզ շահով փող տուղները հայե՞ր են.

—Հայ էլ կայ, թորք էլ կայ:

—Հայերից դաս են վերցրել Ս. Թուրքերը, ասաց Առաքելը դժկամակած, նրանք ճարպիկ վաշխառուներ դարձան: Անունդ ինչ է, եղբայր.

—Քեզ ծառայ Ալլօն:

—Տարօրինակ է այս գաւառի ամեն բանը, այնպիսի անուններ են տալիս, որ շւարում է մարդ: Ալլօն, Թրլունի... Ալլօն աղբէր, որ Հարիւր մանէթ վերցնէք, ինչ շահ էք տալիս:

— Մարդնը գեօրա եա. Հունցը կայ ամիսը հինգ մանէթ, Հունցը կայ տասաւ էլ ռազի չի կէնըմ:

—Աստուած իմ, Աստուած, բայց սրանք էլ չափազանց սցնում են: Հաւատալ չի կարելի.

—Ապէր, էն Ղոնդիկը վկայ, մեր շէնին սովդաքար Մելքօն ապօրիցը չիթգուն մանէթըմ պարտք արալ իրեք տարի սրանա առաջ, Բագուից իրեք տարի շուրունակ ամիս օթ մանէթըմ ղըրկալ, փօստին ղաբզերը լօխահէնա առիս, տարի նըշանց տըւի, հէսաբ արաւ, հէսաբ արաւ, էլլա պարտքաս պըրծում չըլաւ: Մհէկ մընացալա վեր մին գօնըման չիթգուն մանէթը ձեռքին տրնեմ, սանադրս ինք առնեմ, հոքիս ու. մարմինս ազատեմ:

—Վա՛յ, անգութ, վա՛յ, ասաց բորբոքած եղիշը։

—Ալլօն աղբէր, ձեր գեղումը երկրագործութիւնով չես կարող շահուել, բայց ես գնում։

—Բա՞ ասեցի վէչ, վէր Հողան եկածըն էլ բագըն ա քաշըմ տանըմ։

—Ձեր գեղի բէգերը հայ են, թէ թուրք.

—Թորք ա։

—Ինչպէս է անունը.

—Ջաֆար-բէգ։

—Անունը չեմ հարցնում, ազգանո՛ւնը, ինչ օջախ են ասում դրանց.

—Փանահ խանի գեաղա գիւղաներիցընըն։

—Ո՞րտեղից գիտես։

—Ղորմածա Հոգի տատըս ասըմ էր, վէր Ջաֆար-բէգին պապը մեր շէնը մին էշով ա եկալ։ Սրա նրա պըղէնձը կըկլէկէր, համ էլ կիը ու փթիկ կանէր, վերջը Փանահ խանը ըստրան Հուսնցա ընըմ մեր շէնին երրան դարդա ես տընըմ։ Մին խիլա վախթից եան էլ Թոդթա Հանըմ, վէր շէնը Փանահ-խանը իւրան ա բախշալ։

Գնացքը դղրդալով սլանում էր, մեղմ քամին սուլելով անցնում էր վագոնի բաց լուսամուտներից և շոյելով ճանապարհորդների տաքացած լրանները, գնում էր ծովի կողմը, որն Հեռուից, Հորիզոնի ծայրում կանաչագոյն ծփւում էր, միախառնելով կապուտակ երկնակամարին։ Առաքելը լուսամուտի առաջ կանգնած, դիտում էր ծովը, ծովանման ահագին դաշտը, Մուղանի ծովափնեայ դաշտավայրերը. դիտում էր ալեծուփ մտքով և չէր կարողանում խաղաղել իր սիրտը։

(Կըճարուճակւի)

ՓՆՆԻԵԱՆ ՏՕՆԻՆ

Թո՛ղ ամենայն ինչ երկիրն անարգի
Խաւար դարերի բիւր յանցանքներով,
Թուառի ցաւը ոչոմ չ'ամոխի,
Եւ խեղդւի լացը հառաչանքներով։

Համաշխարհային չար գիտակցութեան
Մռայլ ու անդարձ, ներխուժ անդնդում
Դեռ ձայնն ի. ինչում վեհ ներմարտութեան
Որպէս մահալուր զանգերից օդում։

Վաղուց է ծագել աշխարհում լոյսը,
Բայց հալածւում է նա դեռ խաւարով,
Ուզում է խլել թուառի յոյսը
Եւ դառնալ դրժոխք մի նոր աւարով։

Դարերի խաւար, ախտուած ոգին
Ջուր է մղկում նորից զայրոյթով—
Դեռ հետեւում են աշխարհի Փրկչին,
Դեռ խաչ են ելնում անվեհեր ursով։

Դեռ ներւած ursից կայծ է բռնկում,
Վեհ ներմարտութեան անկաւատ տենչով,
Եւ ա'յն, որ վառւեց մի անգամ կրծքում,
Չի մարւում երբէք էլ սուր ու ներով...

Միր—Կօճօ

ԻՍԼԱՄ ԵՒ ՔԻՓՈՐԴ

Մարգարէ՛, կուիր գեավուրների եւ կեղծաւորների դէմ ճախաճձախանդուրեամբ եւ անգութ եղիր նրանց հետ։ Նրանց բնակարանը գեհենն է։

Ղուրան սիւռ. LXVI *Թեհրիմ* 9 *այ.*

Ֆրեթէ հարիւր տարուց աւելի է, որ արեւելքում Բիւզանդական կայսրութեան աւերակների վրայ բարձրացած օսմանեան պետութեան երկրներում աշխատում են, ամեն տեսակ միջոցների դիմելով, պետական, հասարակական, սոցիալական, տնտեսական, գիւղատնտեսական և քաղաքացիական վերանորոգութիւններ, փոփոխութիւններ մրցցնել, բայց այդ անվերջ ջանքերը համարեա թէ ապարդիւն, առանց զգալի հետեւանքների են մնացել։ Վերանորոգութիւնների համար տրւած բոլոր հրովարտակները [1]), հրատարակւած օրէնսդրութիւնները, սահմանւած հիմնարկութիւնները քննական հայեացքի առաջ նմանում են մի տեսակ խաբէութեան, նենգամիտ և խարդախ քաղաքականութեան (diplomatie) ցոյցերի, փքուռոյց կեղծ ոսկեայ առարկաների, որոնց կեղեւի մէջ անպէտք աղբով է լցցրած։ Եթէ լրջութեամբ և ուսումնասիրութեամբ հետեւենք երկրի պատմութեան, ժողովրդի մէջ կատարւած անցքերին և քրիստոնեաների վիճակին, մենք բարեորոգւած փոփոխութիւն չենք նշմարիլ։ Անցեալ դարում քրիստոնեայի հետ ինչպէս որ վարւում էին, դրեթէ նոյնպէս և շարժւում են և այսօր։

Թէ երկրում քրիստոնեաները և թէ արեւմուտքում՝ Եւրոպայում մեծ համակրութեամբ են դիմաւորել ենիչէրիների կոտորելուց յետոյ պարբերաբար հրատարակւած բոլոր հրովարտակներին և օրէնսդրութիւններին։ Այդ վերանորոգչական հրովարտակներն ու օրէնսդրութիւնները նենգութեամբ, թէ ոգևորւած յափշտակութեամբ պարբերաբար ֆրանսերէն թարգմանել, Կ. Պոլսում օսմանեան պետութեան հաշւով տպագրել և ցրել են արեւմուտքում հետաքրքիր, բանիբուն և դիպլոմատիկ շրջաններում։ Ո՞ր յառաջադիմական կուսակցութիւնը, կամ անհատը սրտատրոփ չէր դիմաւորիլ բարբարոս արեւելքում, կիսավայրենի ազգերի մէջ, մոլեռանդ իսլամի տիրապետութեան տակ հրատարակւած և ժողովրդին, ազգաբնակութեանը կատարելապէս հաւասարութիւն խոստացող հրովարտակներին։ Այն հրովարտակներին, որոնք քարո-

[1]) Խաթթը—Հիւմայիւն 26 շաբան 1255 (1839 թ.), Խաթթը—Զէրիֆ 1 Զէմազիլ ախր 1272 (1856 թ.), Խաթթը—Հիւմաւն 23 Զիլհիջէ 1277 (1860), Փէրմանը—Ալի 1292 (1875) Հայկ։

Գնչուների բնաւորիւ

զում էին ջնջել ժառանգական բէգութիւնները, աղալղները, խլել իսլամի հաւայնական հողերը [2]) և վարչական (administration) իրաւունքները այդ ժառանգական առանձնաշնորհեալ դասակարգերից, որոնք մէկ-մէկ դէռ բեգի (ձորի իշխան, ապստամբ, անզուսպ ինքնակոչ իշխան) դարձած՝ չէին հպատակում ոչ մի իշխանութեան և կամայականութիւններով կեղեքում, հարստահարում ու տանջում էին երկրագործ ու արհեստաւոր ժողովուրդը։

Երկրագործ դասակարգը, որ մինչև վերանորոգութիւնները իր հնձի համարեա կէսից աւելին յանձնում էր կալւածական բէգին, կամ աղային, թէ որպէս համայնական, թէ որպէս պետական և թէ որպէս վարչական հարկ, կատարում էր այդ աղայի տնտեսական, տնական և մասնական ծառայութիւնները, ստորաբարշ անում էր նրա ամեն տեսակ հրամանները. աչքի արտասուքները, սրտի խորքից հառաչանքները զսպած տանում էր նրա ամեն տեսակ անարգանքները և զրկանքները, ինչ մեծ հրճանքով էր դիմաւորելու այդ խոստացած օրէնսդրութիւններին և կարգերին, նկարագրելու կարիք չըկայ։

Որի սիրտը չէ բաբախել սուլթան Մէջիդի օսմանեան նահանգներին, գաւառներին, աւաններին և գիւղերին շնորհած ինքնավարութեան կանոնադրութիւնները կարդալիս։ Վարչութեան (administration) բոլոր գործերում պետութեան ներկայացուցիչներին—վալիին, կամ միւդիրին այդ օրէնսդրութիւնների համաձայն տրուում է միայն երեք ձայն (վալին, օգնական և քարտուղարը) ժողովրդի ութը-ինը ձայնի դէմ։ Նապա հասարակական և համայնական ընտրութիւնները, որքան մանրամասնութիւններով որոշում է անհատի ընտրելու, ընտրելելու իրաւունքները, պաշտօնականների անսահման չէզոքութիւնը [3]), Ինչպէս չըհիանայ մարդ, երբ կարդում է սուլթան Մէջիդի Պարիզի կոնգրէսից առաջ տւած հրովարտակը։ Մարդու, անձնաւորութեան անձեռնմխելիութիւնը, ամեն տեսակ բէգեարլից (ձրի աշխատանք), անորոշ տուրքերից, կամայական պահանջներից, սովորական փէշքեաշներից և կաշառատուութիւնից ազատութիւնը։ Մարմնական պատժի իսպառ բարձումը. ծեծ, քաշքշել, դաղել, թաս անցկացնել, ջուր կապել (մէջբին), եղէգ դնել, անդամները կորել, գլխատել, կախել և ուրիշ ամեն տեսակ տանջանքների վերցումը որքան սրտագրաւ է։ Այդ քաղաքական, հասարակական, դատաստանական և քրէական օրէնսդրութիւնները կարդալիս, քրքրելիս, ում միտքը ակամայ չէ ընկել Նապոլէօնի գործերը։

Դեռ 1866 թ. սուլթ. Ազիզը Պարիզից վերադառնալուց յետոյ, լուսաւորութեան նախարարութեան համար հաստատած ընդարձակ օրէնսդրութեան հետ, Օսմանեան երկրում ուսումը պարտադիր հրամայեց։ Այդ կանոնադրութեան համաձայն, հրամայած էր լուսաւոր. միջնորդին բաց անել երկրի ամեն մի անկիւնում՝ գիւղերում, աւաններում պարտ ու պատշաճ ուսումնական հաստատութիւններ, տարրական, միջնակարգ լիսէներ, մասնագիտական դպրոցներ և համալսարաններ։ Այս ուսումնական հաստատութիւնների գոյութիւնը պահպանելու համար նոյն թուին հրատարակեց մի ուրիշ հրովարտակ, որ երկրի բուսականութիւնից մի տասներորդ հարկի (աշար) փոխարէն, ստացւի մի ութերորդը և յաւելած հարկը սահմանւի լուսաւորութեան նախարարութեան ծախսերին։ Հէնց այն տարւանից սկսեցին քրիստոնեայ ապգաբնակութիւնից այս աւելացած հարկը հաւաքել, այն ինչ մինչև այսօր, ուսումնարաններ, պարտադիր ուսումն դեռ պիտի կարգադրւին...

Երբէք զարմանալու չէ, եթէ երկրի դրութիւնը քննենք մի իսլամի հայեացքով և հասկացողութիւնով, թէ ինչի չեն կատարւում, չեն գործադրւում խոստացած և հրատարակած այդ օրէնսդրութիւնները։ Այն ինչ փոխանակ գործադրելու այդ օրէնսդրութիւնները, հաւասարացնելու ապգաբնակութիւնը, պաշտպանելու անհատական իրաւունքները և ապահովելու. քրիստոնեայ ապգաբնակութեան գոնէ պատիւն ու կեանքը, մենք երկրի ամեն մի անկիւնում դիմաւորում ենք հարստահարութիւնների, զրկանքների, կողոպուտների, բարբարոսական տանջանքների, անզուսպ հառաչանքների և դժոխային կոտորածների։ Ամեն տեղ ժողովուրդը, քրիստոնեայ ապգաբնակութիւնը գրաստների պէս տանջւում են, քաշելով իրանց ուժից շատ բարձր հարկերի ծանրութիւնները և շնչասպառելով այդ վճարումները հաւաքող անխիղճ զաթիէների ճիրանների տակ։ Հարկեր ոչ միայն պետական, հասարակական, այլ դրանց կրկինից և քաւապատկից աւելի մասնական պաշտօնեաների, քիւրդ բէյերի, քաղաքացի աղաների, շէյխերի, հարկահաւաքների և չըգիտեմ էլ ինչերի ձրի ծառայութիւնները, անանուն հարկերը, անվերջ տուգանքները և վճարումները։

ԱՏՊԵՏ

(Կըշարունակի)



[2]) Իսլամական հասկացողութեամբ, շէրի (կրօնական) վարդապետութեան համաձայն իսլամի զինուորներով նւաճած և ինքնակամ հպատակած բոլոր երկրների հողերը կազմում են իսլամի համայնքի ընդհանրական սեփականութիւնը—Բէյթ-իւլ-մալ, կամ Արազի—Ամիրէ (ամիրապետական հողեր) և վագֆներ։ Այդ կալւածների երեսը մասնաւորների կապալով (զաբալա) արւում է ընդմիշտ օգտւելու տանորդական հարկով, բայց ոչ սեփականութիւն եւրոպական իրաւաբանական բառի մտքով (propriété), իսկ կալւածքը միշտ մնում է Բէյթ-իւլ-մալ։ Իսմերն երբ Նւաճեց Պարսկաստանն ու Եգիպտոսը, բոլոր հողերը համայնականի վերածեց։ Recherches sur la constitution de la propriété dans les pays Musulman p. 122 et 123, Worms. Ընդմիշտ կապալով օգտւելու իրաւունք ունեցողը, կարող է իր իրաւունքը ծախել, գրաւ դնել, բայց միջից դուրս եկած հանքին ոսկուն և գտնւած իրին, դարձեալ տէրը Բէյթ-իւլ-մալն է։ Legislation musulman II p. 269. 293 et 648. Perron. Ղուրան սիւրիա II բէգարա 27 այեաթ։

[3]) Վիլայէթների վարչութեան յատուկ կանոնադրութիւն, որտեղ կան նաև սուլթանների նշանաւոր հրովարտակները և հրահանգները. Կ. Պոլիս 1868 թ. Գըլըճհեանի հրատարակ.

Քննադատական

Գրականութիւն եւ մամուլ

Մեր գրականութիւնը 1897 **թիւն**

(Շարունակութիւն *)

—

Մեր հրապարակախօսութիւնը կատարել է չորս տեսակ հիմնարկութեանց միջոցով, որոնք են.

1) Երեք թերթեր՝ Մշակ, Նոր-Դար, Արձագանգ։

2) Մի ամսագիր՝ Մուրճ։

3) Մի շարք ժողովածուներ։

4) Գրքեր։

Նախ սկիզբ խօսենք ուրեմն մեր թերթերի հրապարակախօսութեան մասին։ Հայց յառաջ քան բուն նիւթին անցնելը՝ մի քանի կարևոր նկատողութիւններ անենք։

1) Մենք ի նկատի ենք ունենալու գրեթէ բացառապէս առաջնորդող յօդուածները, որոնք սովորաբար մեծ տառերով են տպագրուած լինում և սովորաբար բովանդակում են իրանց մէջ հրապարակախօսութեան ծուխը։ Ի հարկէ, մանր տառերով տպուած յօդուածներն էլ շատ անգամ հոշափում են կարևոր խնդիրներ. նոյնը կարելի է ասել և գաւառական թղթակցութիւնների մասին։ Այնու ամենայնիւ մի թերթի հրապարակախօսութեան էութեան և արժանաւորութեան մասին կարելի է բոլորովին պարզ գաղափար կազմել, ծանօթանալով նրա մեծատառ առաջնորդողների հետ։

2) Հրապարակախօսութեան առարկան կարող է լինել կամ որև է ներքին խնդիր (հասարակական որեւ է հարց, երեւոյթ եւ այլն), կամ թէ ինքը հասարակութիւնը (ազգը), որպէս մի ամբողջութիւն։ Առաջին կարգի խնդիրները վերաբերում են հասարակական հրապարակախօսութեան, իսկ երկրորդ կարգի խնդիրները քաղաքական յօդուածների նիւթ են կազմում։ Մեր խօսքը վերաբերում է առաջին տեսակի հրապարակախօսութեան։

Այժմ անցնենք մեր գլխաւոր նիւթին՝ սկսելով Մշակից, որովհետև սա է այժմ մեր ամենահին լրագիրը։

Մշակի հրապարակախօսութիւնը 97 **թ.**

Մշակը տուել է անցեալ տարի ընթերցող հասարակութեանը մօտ հարիւր հատ առաջնորդող յօդուածներ, որոնք ըստ նիւթի կարող են բաժանուել հետեւեալ դասակարգերի.

1) Հետազօտութեան վերաբերեալ գտնում ենք մի հատիկ առաջնորդող «Ո՞վ պէտք է ասի» վերնագրով (№ 110)։ Յօդուածը գանգատւում է, որ մեր (Կովկասեան) գիտնական ընկերութիւնները գէօլօգների մեր երկիրը գալու դէպքից չեն օգտւում։ Մանաւանդ մեղադրւում է Աշխարհագրական ընկերութիւնը։

„Եթէ Աշխարհագրական ընկերութիւնը իր ծրագրով կամ ներկայ կազմութեամբ անկարող է օգնել այս կարևոր գործին, այն ժամանակ պէտք է մտածել մի նոր հիմնարկութեան կամ ընկերութեան մասին, որ ընդունակ լինէր ծառայելու իբրև կենտրոն թէ տեղական գիտնական ինիցիատիվի և թէ առհասարակ տեղական կարևոր գիտնական հետազօտութիւնների համար“։

Ի հարկէ, համակրելի միտք է, բայց ինչպէս ասացինք, այդ յօդուածը միակն է, և սրան էլ առիթ է տուել գէօլօգների արշաւանքը. ուրեմն հակառակ դէպքում այդ էլ կըբացակայէր։ Այստեղ մարդ սրտի վշտով մտաբերում է այն օրերը, երբ հանգուցեալ խմբագիրը չէր դագարում բացականչելով հեռագօսեցիէ, ուսումնասիրեցիէ, հում նիւթ տէէ մեզ... և ոչ միայն բացականչում էր, այլև շատ անգամ բացատրում էր, թէ ինչ պէտք է հետազօտել և ինչպէս։ Իսկ այժմեան Մշակի խմբագրութիւնը մի ամբողջ տարւայ ընթացքում բաւականանում է մի հատիկ պատահական յօդուածով, մի գանգատով ուրիշ հիմնարկութիւնների մասին։

2) Ընդհանուր բաղաքական յօդուածներ։ Մեր մամուլի գլխաւոր պարտաւորութիւններից մէկն էլ այն է, որ նա միշտ լայն բացած աչքերով դիտէ թէ ինչ է կատարւում ընդհանուր քաղաքակրթութեան ասպարիզում (մեր խօսքը չէ վերաբերում բաղաքականութեանը), ինչ հանրամարդկային քայլեր են անւում, ինչ համաշխարհային հարցեր են հոշափւում, և այդ բոլորի հետ մատչելի ձևերով ծանօթացնէ հայ ընթերցողին։ Եւ ահա մինչդեռ ժամ առ ժամ փոփոխւում է հանրամարդկային կեանքը, խորտակւում են կենսական հնամաշ ձեռքերը, ստեղծագործւում են նոր հիմնարկութիւններ, մարմնանում են ամենանշմարտ գաղափարներ... կեանքի այդ աղմկալի շարժման ականատես լրագիրը կարողացել է տալ հայ հասարակութեանը եօթը հատ փոքրիկ յօդուածներ։ Ծանօթանանք այդ յօդուածների հետ։

ա) Եւրոպա եւ Ասիա (№ 4)։ Յօդուածի միտքն այն է, որ

„Ասիայի ու Աֆրիկայի Եւրոպայի հետ կռիւը քաղաքական չէ, այլ կուլտուրական։ Նա կըշարունակվի, մինչև որ եւրոպական կուլտուրան ամեն տեղ յաղթող կրհանդիսանայ“։

բ) Աւետարանական միութիւն (№ 73)։ Այստեղ աւետարանական միութեան հարցը շփոթած է քրիստոնէական եկեղեցիների միութեան հարցի հետ։

„Պարզ է, ասած է յօդուածի վերջերում—որ ներկայումս, երբ քաղաքականութիւնը և աւետարանի լոյսը հզօր (?) նաճումներ են կատարել և կատարել չեղափոխութիւն առաջ բերել մարդկային մտքի մէջ, բիսմոնեական եկեղեցիների միութեան համար պէտք է այլ չենակետեր, այլ հիմնաքարեր որոնել և ընդունել„։

Մեր կարծիքով, եթէ քաղաքակրթութիւնը և աւետարանի իսկական լոյսը ամենուրեք և բոլոր ոյժով տարածւեն, այն ժամանակ իսկի եկեղեցիների միութեան հարց էլ չի լինիլ, որովհետև առանձին եկեղեցիները, որպէս իրաւաբանական, դիսցիպլինայի վրայ հիմնուած կազմակերպութիւններ, կըկորցնեն իրանց նշանակութիւնը, ուստի և գրեթէ աւետարդ դարձած հիմնարկութիւնների միութեան հարցն էլ կըկորցնէ իր նշանակութիւնը։

գ) Երջանիկ անմտութիւն (№ 108)։ Պարիզի արևելագէտների ժողովին ներկայացրած է եղել ինչ որ աշխատութիւն ճշմարտութիւնը իսլամի եւ օսմանեան պետութեան մասին վերնագրով, որի մէջ իսլամը երկինք է բարձրացրած։ Մշակը մի քանի ակնարկներ է անում այդպիսի անարդար վարմունքի դէմ։

դ) Գրական դաշնակցութիւն (№ 108)։ Յօդուածը վերաբերում է ռուս-ֆրանսական գրականական դաշնակցութեանը և արձարձում է այն միտքը, թէ այդ դաշնակցութիւնից միայն ռուսական գրականութիւնը կա

*) Տես Տարազ № 1

րող է օգտուել, քանի որ ֆրանսիականը շատ աւելի բարձր է կանդնած.

ե) Հակասեմիտականների մի նոր վարմունքը (№ 121). Յայտնի հակասեմիտ Լիւդեր հինգ ազատամիտ ուսուցիչ է արձակել պաշտօնից, ուստի նրա դէմ գլխնել է աւստրիական ուսուցչական միութեան կենդրոնական մանաժողովը. Սա պաշտպանում է ուսուցիչների քաղաքացիական ազատութիւնը. Մենք չենք հասկանում, թէ ինչպ՛ս է կապւում այդ խնդիրը մեր կեանքի հետ և թէ ինչ առանձին քաղաքակրթական խընդիր է այդ։

զ) Իռլանդուկ տարր Ամերիկայում՝ քաղաքագէտ է մի ամերիկական լրագրից։ Ոմն Ստիօնդ պնդում է, որ քաղաքների բնակիչները շատանում են գիւղերից գաղթողներով և որ վերջիններս կորցնելով իրանց պիւղացիական իրաւունքները, նոր իրաւունքներ չեն ձեռք բերում քաղաքներում։ Թէ ինչ է ուզում Մակը այդպիսի անհետաքրքիր քաղաքներ անելով, հանելուկ է մնում։

է) Անհրաժեշտ կարիք (№ 134) համարւում է երկաթուղին, որպէս փոխադարձ շփման եւ յարաբերութեան նպաստող ոյժերից մէկը։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այդ յօդուածները մեծ մասամբ շատ քիչ կապ ունէին մեր կեանքի հետ, ուստի և հետաքրքիր չեն։ Ոմանք էլ կարող էին հետաքրքիր լինել, եթէ փոքր ի շատէ մշակուած լինէին։ Վերջապէս սրանցից ոչ մէկը մի աչքի ընկնող նորութիւն չէ ներկայացնում և վերջապէս սրանք չեն ներկայացնում շատ դէպքում Մակի ինքնուրոյն կարծիքը։

Ս. ԹԱՌՈՅԵԱՆՑ

(Կըշարունակի)

—

ՄԱՄՈՒԼԸ ՆՈՐ-ՏԱՐԻՑ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՏԱԿ

—

Որպէս գարնան առաջին ճառագայթների ազդեցութիւնը պգալով բազմաթեակ թռչունները սկսում են լի աշխոյժով ճըլուլալ՝ իւրաքանչիւրը իր երգը, նոյնպէս էլ քրիստոնէութեան ծնունդեան տօների ազդեցութեան տակ հրապարակախօսները բացում են իրանց սրտերը, որտեղից դուրս են թռչում նրանց ամենալաւ երգերը, նրանց իսկական խօսքը։ Սովորական օրերում սրանք շատ անգամ թոյլ են արտայայտւում, չեն ասում իրանց սրտի խորքերում թագնուածը, կամ ասում են ոչ այնքան պարզ կերպով, իսկ տօների ազդեցութիւնը շարժում է սրանց սրտի լարերը...

***

,,Պատմութիւնը այժմ մաճռացել է — ասում է Ջուզեպ Լրագրը—որովհետև մանր մարդիկ են նրան ուղղութիւն տուողները... Հերկուլէսների և Թէզէոսների հերոսութեանց առասպելական դարեշրջանը վաղուց անցել է և այսօր պատմութեան ընթացք տուողը ,,միջակ'' մարդն է։ Լաւ է այդ, թէ վատ—այնուամենայնիւ ներկայ ժամանակի այդպիսի բնաւորութեան մէջ լաւ կողմեր շատ կան։ ,,Հերոսութիւնները'' կատարւում են ոչ թէ անհատի, այլ բազմութեան ձեռքով, ուրեմն պատմութեան ընթացք տուողը ներկայումս ինքը հասարակութիւնն է''...

Մեզ ևս ուրախացնում է այն, որ բազմութիւնը, հասարակութիւնը ինքըն է որոշում իր կեանքի ընթացքը, միայն թէ ի զուր է կարծում յիշեալ լրագիրը, թէ ներկայումս ազգերը անընդունակ են դարձեալ խոշոր մարդիկ ծնելու, հերոսներ արտադրելու... Ոչ,այլ մեր օրերում մարդկութիւնը մի տեսակ շշմել է գինուորական—դիպլօմատիկական ճնշուղութեան տակ... Սրանից է, որ պատմութիւնը մանրացած է երևում։ Սա մի ճգնաժամ է, որ շուտ կ'անցնի... Թարմ զեփիւռը նորից կըփչէ և խոշոր հերոսութեանց դարը կըսկսի աւելի մեծ եռանդով...

***

Աւելի խիստ լեզու է բանեցնում Міров. Отг. Թերթը.

,,Առայժմ աշխարհը, որ ոչ մի բանի մասին լրջութեամբ չէ մտածում և ոչ մի բանի չէ հաւատում, որ ծաղրում է ամեն մի բարձրութիւն, ամեն մի լրջութիւն յաղթող է հանդիսանում, բայց նրա յաղթութեան օրերը համարւած են։ Չէնց որ կըցրէ Նրան շրջապատող մառախուղը, հասարակութիւնը կըտեսնէ, թէ ինչպիսի դատարկութիւն և ոչնչութիւն էր թագնուած առաջնորդող ոյժի դիմակի տակ, կըտեսնէ և կըփախցնէ սրան անարժան դիրքից։։։

Այո, այո, Աստուած ձեր բերանից լսէ...

***

Կասես թէ չիշեալ թերթի միտքը աւելի պարզելու համար գրում է Спб. Вѣд.

,,Կեանքը գեղեցիկ է այն պատճառով, որ իդէալը անհասանելի է, որ նա յաւիտեանս գրգռում է մեզ կատարելագործւելու, բարձրացնում է մեզ այդպիսի ձգտումով, թարմացնում է մեր ոյժերը, բայց թոյլ չէ տալիս հասնել վերջնական նպատակին, չըլինի թէ մենք փշրենք հանգիստ բախտի մէջ... Ոչ, բախտը հանդստութեան մէջ չէ։ Բախտը այն աշխատութեան մէջն է, որին մենք նւիրուած ենք... Բախտը գտնւում է զօրեղ թռիչուղ սրտերի մտածութիւններով լիքը գլխներին, վշտալի հոգիների ու իր կոչումը ըմբռնող դիտակցութեանց մէջ...''

***

Մինչև անգամ Սուվորինի օրգանն էլ զարթնել է ու սոխակի ձայնով է երգում.

,,Ուրախութեամբ դէպի առաջ, դէպի կեանքի խոր հոսանքը, բռնած եղբայրական ձեռներից, գնանք օգնելու թոյլին, զրկեալին ու տկարին''.

Զարմանալի է...

***

Իսկ ,,Русск. Вѣд.'' բացականչում է ուրախացած.

,,Հոգեկան սնունդի պահանջը հետզհետէ աճում է, գրաճանաչութիւնը փոքր առ փոքր տարածւում է, գիրքը լայնանում ու խորանում է, սրա հետ միասին զարթնում է մտքի գործունէութիւնը, զարգանում է ուսանելու սէրը, թուլանում է նախապաշարմունքը, գիտութեան վրայ ունեցած վստահութիւնդ ամրանում է, զօրեղանում է և հաւատը դէպի քաղաքակրթ կեանքը։ Բնական է ցանկալ, որ մեր քաղաքակրթական քայլերը աւելի արագանան, որ հետզհետէ անհետանան սրան խանգարող արգելքները...

***

Նրանց ձայնակցում է Գրիգոր Արծրունին գերեզմանի խորքից հետևեալ կերպով (1872 թ. № 1)։

